

ՆՈՐԱՏԻՊ ՄԱՏԵԱՆՔ

Կ. ՅՈՒՆՈՍԻ ԿԵՍԱՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՔ.
ԴԱՐՁՄԱՆՈՒԹՅԱՆ Հ. Ա. Վ. ԲԱԳՐԱՏՈՒՆՈՑ:

Կ. ՏԵԿԻՏՈՍԻ ԱԳՐԻԿՈՒԱ, ԳԵՐՄԱՆԻԱ,
ԵՒ ՏՐԱՄԱՍՈՍՈՒԹԻՒՆ ԶՀՈՅՏՈՐԱՅ:

ԸՆԴ ԵՂԵՒՆԵԱՒ ՅԱՄԱՅՈՒԹԵԱՆ ԲԱՐՁՐԱՅՐԻ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹՅՈՒՆՔ:

ԳՈՐԾԱՌՈՐՔ:

ՎԿԱՅԱՐԱՆՈՒԹՅՈՒՆՔ ՍՐԲՈՑ. — Առաջին հաւատացեալը՝ որոց կեանքը եւստիճուն աստուածսիրութեան վառարան մը կրնանք անուանել, բաց 'ի ընտանեկան ու միաբանական շատ մը բարեպաշտական հրահանգներէ, սովորութիւն ունէին ընթեռնուլ եկեղեցեաց մէջ վկայից ու վկայութեան քաջակրօն նահատակութեանց պատմութիւնները, որպէս զի աւելի ևս 'ի բարեպաշտութիւն յորդորութիւն անոնց օրինակաւ: Այլ ըստ յառաջիկ ժամանակաց ոտն առ ոտն շինանելով հաւատացելոց մէջ աստուածսիրութեան եռանդը, վերջաւ ևս այս գեղեցիկ սովորութիւնը. բայց որպէս զի գէթ շնորհակցին սրբոց մեծահանգէս նահատակութիւնները, սկսան օրինակել և հրատարակել անոնց վարքը, ինչպէս Արեւմտեան նոյնպէս և Արեւելեան եկեղեցեաց մէջ 'ի շնորհակցին քրիստոնէից:

Հայկական եկեղեցիին ևս ունեցած է իր վկաները ու վկայատէրները, որոնք ամփոփած են նոցա նշխարաց հետ և վարուց պատմութիւնը և աւանդած յետագայից:

Ասոնք թէպէտ և զանազան առթիւ հրատարակուած են բաղմունքաւոր ու բաղմունքաւոր տպագրութեամբք ու ծանօթութեամբք 'ի նոր Վկայատարաց, բայց 'ի գիւրտութիւն կղերին և հաւատացելոց, կը հրատարակենք Վկայաբանութեանց ուրիշ հաւաքում մ'ալ յերկուս հատորս ամփոփեալ. որք բաց 'ի տօնացուցից տօնելի սուրբերէն կը պարունակեն այնպիսի սրբոց վարքեր ալ, որ ոչ 'ի տօնացոյցս կը գըտնուին, և ոչ մինչև հիմա տպագրեալ վկայաբանութեանց մէջ, և հետեւաբար հետաքրքրականք: Այս առաւելութիւնն ալ ունին, որ պարզ գրութիւնք կամ թարգմանութիւնք են նախնեաց 'ի յունականէն կամ յասորականէն, երկասիրութիւնք հինգերորդ կամ վեցերորդ տակաւարուց, ընտիր ոճով և գրութեամբ. ուստի չենք տարակուսիր որ ընտիր ախորժակ ունեցող ընթերցողն, բաց 'ի սրտի կրթութիւնէն, կ'ունենայ և մտաց կրթութիւն 'ի մատենագրական մասին:

ՄԱՅՐ, ԱՌԱՋԻՆ ԴԱՏԱՅԻՄԱԿ ՄԱՆԿՈՒԹԵԱՆ. — Գործոց ու զաղափարաց չփոթ ժամանակի մէջ ենք. մէկ կողմանէ կը տեսնանք ինչպէս յայլս, նոյնպէս և 'ի մեզ յառաջագիտութեան անընդհատ գովելի վանք ու շարժում մը, միւս կողմանէ ալ պակասութիւն այն կարեւոր յատկութեանց՝ որոցմով միայն կրնայ ազգ մը կամ ժողովուրդ մեծնալ ու երջանկանալ: Դատարարական ընդհանուր թուութիւն, իշխանութեան տկարութիւն, մեծարանաց ու յարգանաց պակասութիւն, կրօնից արհամարհութիւն, ահաւաստիկ ա-

սոնք են ճշմարիտ բարւոյն ու երջանկու-
թեան արգելները:

Մարդկութիւնը թէ որ ըստ արտաքին
երևութիւն միայն դատելու ըլլանք, կըր-
նանք թերեւ մասամբ մ'երջանիկ անուա-
նել զինքը, վասն զի ազատ է ըստ իւր ա-
խորժանացը շարժիլ, գործածել կամ ան-
գործ թողուլ իր կարողութիւնքը ու հանճա-
րը, և կատարել կամ չկատարել իր փափաք-
ները, իսկ թէ որ ըստ ներքինոյն դատեմք,
տակաւին շատ հեռու կը գտնանք զինքը
այն փափաքելի երջանկութենէն, զոր կրօն-
քը միայն կրնայ պարգեւել: Եւ զարմանք
չէ. վասն զի սոսկ քաղաքական ընկերու-
թիւնը կարող չէ տալ մարդոյ այս բարոյա-
կան կատարելագործութիւնը, զոր փութա-
կան դատարարակութիւնն միայն կրնայ
կատարել, և կը յաջողի մայրենի դաստիա-
րակութեամբ:

Այո՛, մայրերն պիտի ըլլան առաջին տա-
րիններուն մէջ տղոց դաստիարակ, առաջ-
նորդ, խորհրդական և օրինակ, որոնք
թէ որ հաւատարիմ կերպով ծառայելու
ըլլան իրենց այս գեղեցիկ կոչմանը՝ որ
կրօնիք միայն կ'ըլլայ, կը տեսնանք որ
քիչ տարուան մէջ կը վերանորոգուի ընկե-
րութիւնը:

Եւ ահա մեր ազգն ալ այս վերանորո-
գութեան ճամբուն վրայ դնելու ձեռնտու
ըլլալու համար, կ'ընծայեմք մերազնեայ
մարց այս համառօտ բայց օգտակար գրու-
թիւնը, որ կ'ուսուցանէ մայրենի դաստիա-
րակութեան կերպը կամ արուեստը, և կը
կրթէ զնոյն ինքն մայրերը՝ պատրաստե-
լով առ այն նպատակ:

Վստահութեամբ կրնանք գուրցել որ մեր
ազգին մէջ այդ նպատակին հասնելու ջան-
քը պակաս չէ. ունինք շատ տեսակ աշխը-
կանց դպրոցներ, որ կը պատրաստեն զա-
նոնք ի մայրութիւն. բայց թէ որ հանդերձ
այս ամենայն ջանքերով մեր նպատակէն

հեռու կը մնանք, հարկ է խոստովանիլ որ
առ այն հասնելու միջոցաց մէջ պակասու-
թիւն կայ, զոր պէտք է դարմանել և փու-
թով դարմանել:

Ս. ԲԵՌՆԱՐԴՈՍԻ ԺԱՌՔ Ի ԳՈՎՈՒ-
ԹԻՒՆ ՄՕՐ ԿՈՒՍԻ. քարգմ. Ի Հ. Ե.
Վ. ԹՈՄԱՅԱՆ. — Այս ճառերը որ չորս
են թուով, Բեռնարդոսի սակաւաթիւ գը-
րուածոց մէջ գլխաւորներէն են: Հաճո-
յական ու հրահանգիչք են յընթերցումն,
յորս կը տեսնուի մեծ աստուածարեալ հո-
գի ու եռանդուն բարեպաշտական սէր
մը առ Տիրամայրն. չէ անշնան և ի ճար-
տասանական մասին: Աստուածախօսս վեր-
դապետը գեղեցիկ ու ընտիր ոճով կը մեկ-
նարանէ Աւետարանին առ Տիրամայրն ուղ-
ղած խօսքերը, կը գովաբանէ անոր գեր-
մարդկային խոնարհութիւնը և անարատ
կուսութիւնը:

Հայերէն թարգմանութեան վրայ աւե-
լորդ կը համարեմք խօսիլ. վասն զի Թոմա-
ճանի անունն ու գրիչը արդէն շատ իսկ
ծանօթ է մերազնեայ բանասիրաց իր ոտա-
նաւոր և արձակ թարգմանութիւններովը:

ՔՆԱՐ ԱՄԵՐԻԿԵԱՆ. — Հաւաքածոյ
ոտանաւոր չափամբ Նորոյ աշխարհին
մեծանուն քերթողաց սրբազան ու սրտա-
ռուչ տաղից, ճաշակ մը տալու մերազնեայ
սիրաբանից ամերիկեան բանաստեղծու-
թեան վրայ: Կը գտնայ հօն ընթերցողը
զլ'անատեսութիւն Պրայնդի, զլ'զար յա-
նապատի Ն. Ուիլիսի, զլ'եմանոսիւն Տէ-
նաի, զՀենդըն և Մադիսոնը Լոնկֆելտի,
գերիկի Երանելեաց Բիպոտեայ, և այլն, և
այլն. յորոց կ'իմացուի թէ քերթողական
աշխոյժն ունի իր թռիչքերը նա և յլ'մե-
րիկա:

